



ՀԵՌՈՒՍՏՍԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

4 հունիսի 2021 թվականի թիվ 93-Ա
ք. Երևան

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍՈՒՄ ՍԼՈԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԱՅԻՆ ՍՓՈՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփուման մրցույթին մասնակցելու համար 2021 թվականի ապրիլի 4-ին հայտեր են ներկայացրել «ՓԱՍՏԻՆՖՈ» ՍՊ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությունները (այսուհետ նաև՝ Ընկերություններ):

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն յուրաքանչյուր հայտին կից ներկայացվել է.

1. փաստաթուղթ՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողի նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ,
2. ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր,
3. տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ,
4. տեղեկություններ աշխատակազմի քանակի, նրանց կրթության և մասնագիտության վերաբերյալ,
5. էթիկայի կանոնագիր,
6. էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները,
7. լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը:

2021 թվականի ապրիլի 14-ի Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի դռնբաց նիստում Ընկերությունները մինչև 30 րոպե տևողությամբ հրապարակել են իրենց հայտերը և կից փաստաթղթերը:

Հայտերը և կից փաստաթղթերը ներկայացվել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Ուսումնասիրելով և համադրելով «ՓԱՍՏԻՆՖՈ» ՍՊ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերը, արձանագրենք հետևյալը.

«ՓԱՍՏԻՆՖՈ» ՍՊ ընկերության ներկայացրած փաստաթղթերի համաձայն հաղորդացանցում ներառված հաղորդումների 80 %-ը կազմելու են սեփական արտադրության հաղորդումները, իսկ հաղորդումների ամսական ընդհանուր ժամաքանակի 90 %-ը՝ հայերեն հաղորդումները:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերությունը նշել է, որ սեփական արտադրության հաղորդումները գերակա են եթերում և գերազանցում են օրենքով նախատեսված ծավալները, ինչպես նաև մայրաքաղաքի հեռուստադիտողի պահանջմունքները բավարարելու նպատակով զգալիորեն ավելացրել է սեփական արտադրության հաղորդումների ծավալը՝ հասցնելով այն մոտ 80 %-ի, իսկ հայերեն հաղորդումները գերակա են լինելու եթերում և ծրագրվում է հայալեզու կոնտենտի շարունակական ավելացում:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության կողմից հեռարձակվող հայերեն հաղորդումների ծավալների պահպանման պարտավորությունը սահմանված է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով, համաձայն որի հանրային հեռարձակողը պարտավոր է օրվա եթերաժամը հատկացնել հայերեն տեսալսողական հաղորդումներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի և ըստ ներկայացված տվյալների՝ տեսալսողական հաղորդումների մեծ մասը հայերեն են և սեփական արտադրության:

Օրենքի վերոնշյալ պահանջը «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությունն իր գործունեության ընթացքում ճշտորեն ապահովել է՝ 2019 և 2020 թվականներին յուրաքանչյուր տարվա կտրվածքով հեռարձակված հաղորդումների առնվազն 98 %-ը կազմել են հայերեն հաղորդումները, իսկ սեփական արտադրության հաղորդումները կազմել են համապատասխանաբար 75 % և 85 %:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերությունը թեև նշել է, որ սեփական արտադրության հաղորդումները գերակա են եթերում և գերազանցում են օրենքով

նախատեսված ծավալները, սակայն, թե նախկին՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքով, և թե գործող՝ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով սեփական արտադրության հաղորդումների պարտադիր հեռարձակման ծավալ սահմանված չէ: Մինչդեռ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերությունը 2010 թվականի մրցութային հայտով պարտավորվել էր, օրինակ, վերջին երկու տարիներին՝ 2019 և 2020 թվականներին ապահովել համապատասխանաբար 99.3 % և 98.8 % ծավալով հայրենական արտադրության հաղորդումներ և 80.7 % և 80.2 % ծավալով սեփական արտադրության հաղորդումներ, սակայն եթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2019 և 2020 թվականների համար փաստացի հեռարձակման ծավալները կազմել են՝ 58.2 % և 61.3 % հայրենական արտադրության հաղորդումներ, իսկ 80.1 % և 68.3 %-ը՝ սեփական արտադրության հաղորդումներ: Վերոնշյալի համատեքստում ակնհայտ է, որ անգամ իր կողմից ստանձնած պարտավորությունը «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերությունը չի պահպանել: Միննույն ժամանակ, ընկերությունը ընդգծել է, որ կարևորելով արտասահմանյան կոնտենտի առկայությունը եթերում, միշտ կարևորվել է օրենքի պահանջին համապատասխան ծավալով այն հայերեն թարգմանված մատուցելը, որ ֆիլմերի կրկնօրինակումը կատարվում է որակյալ, որը սկզբունք է, որպեսզի չվնասվի մեդիա կոնտենտի օրիգինալը, իսկ որպես թարգմանության ոչ ենթակա արտադրանք նշվել են արտասահմանյան համերգներն ու տեսահոլովակները: Սակայն արձանագրենք, որ եթերի փաստացի դիտարկման համաձայն, օրինակ, 2019 և 2020 թվականներին հեռարձակված համապատասխանաբար 190 ֆիլմերից միայն 6-ը և 181 ֆիլմերից միայն 10-ն է հեռարձակվել հայերեն:

Բազմակարծությունը խթանելու կարողության վերաբերյալ Ընկերությունները ներկայացրել են հետևյալ հիմնական դրույթները.

«ՓԱՍՏԻՆՖՈ» ՍՊ ընկերությունը նշել է, որ երաշխավորելու է կարծիքների արտահայտման ազատությունը:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերությունը բազմակարծությունը ապահովելու է լրատվական, հասարակական-քաղաքական, գիտակրթական, սոցիալական, երիտասարդական, մշակութային, սպորտային և երաժշտական ծրագրերի, գեղարվեստական և վավերագրական ֆիլմերի միջոցով: Ընդգծել է նաև, որ անցած ավելի քան 20 տարիների ընթացքում հեռուստաընկերությունը ապացուցել է իր բազմակարծությունը խթանելու կարողությունը, ինչպես նաև, որ բազմակարծությունը խթանելուն են ուղղված «Լրաբեր», «Խոսքի իրավունք», «Պրոֆֆակտ», «Ժողովրդի ձայն», «Հետաքննություն», «Զէին սպասում»,

«Զրույց Գայանե Փայտյանի հետ», «Համով գրույց», «Ինչ է ուզում կինը», «Ճանապարհ դեպի քեզ», «Մագավտո պլուս», «Մի մեղալի պատմություն», «Պերսոնա» հաղորդաշարերը:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությունը բազմակարծությունն ապահովելու է հասարակական-քաղաքական հաղորդումների, հանրային քննարկումների, խորհրդարանական լսումների, հանրային կարծիքի ներկայացման, ինչպես նաև տեղեկատուների, հարցազրույցների, բանավեճերի, վերլուծությունների, մասնագիտական կարծիքների և քննարկումների միջոցով:

Այս չափորոշիչի գնահատման առումով ոչ միայն կարևոր են գուտ խոստումները, այլ նաև այն, թե նախկինում որքանով են իրագործվել դրանք:

Արձանագրենք, որ «ՓԱՍՏԻՆՖՈ» ՍՊ ընկերությունը իր գործունեությունն իրականացնում է միայն համացանցով և նախկինում ստանձնած պարտավորությունները իրագործելու առումով գնահատման ենթակա չէ:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությունների բազմակարծությունը խթանելու կարողության գնահատման համար դիտարկվել է ծրագրերում առկա քաղաքական, սոցիալական ուղղվածություն ունեցող հիմնական հաղորդումները՝ հաղորդումների թեմաների, հրավիրված հյուրերի, ինչպես նաև նրանց քաղաքական հայացքների տեսանկյունից: Դիտարկումը կատարվել է 2020 թվականի հունիսի 25-ից մինչև սեպտեմբերի 2-ը, համաձայն որի «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերության բազմակարծությունը խթանելու կարողությունը բավարար չէ, իսկ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությունը ունի բավարար կարողություն բազմակարծության խթանման համար:

Որպես ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը.

«ՓԱՍՏԻՆՖՈ» ՍՊ ընկերությունը ներկայացրել է ներդրում կատարելու մտադրության մասին գրություն, գովազդային ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր կնքելու մտադրության մասին հինգ գրություն, ծառայությունների վճարովի մատուցման երեք պայմանագիր:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերությունը ներկայացրել է անշարժ գույքի սեփականության վկայական, տեղեկանք և գրություն՝ կատարված և կատարվելիք ներդրումների մասին, հաշվապահական հաշվեկշիռ, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին, գովազդային ծառայությունների,

ծառայությունների վճարովի մատուցման, համագործակցության և լիցենզիոն մի շարք պայմանագրեր:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությունը ներկայացրել է տեղեկանք բանկի կողմից՝ ֆինանսավորման պատրաստակամության մասին: Նշվել է լրատվական նոր տեսալսողական ծրագրի գործարկման համար անհրաժեշտ գումարի չափը, որը հանրային հեռուստաընկերությունը կհատկացնի իր տարեկան բյուջեից: Ներկայացվել է նաև բյուջեի ընդհանրացված բացվածքը: Հավելենք, որ Կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի թիվ 570-Ն որոշմամբ հանրային հեռարձակողը լրացուցիչ ֆինանսավորում է ստացել:

Հարկ է նշել, որ ֆինանսական հնարավորությունները գնահատելիս Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը հաշվի է առել ստանձնած ֆինանսական պարտավորությունների ծավալը և այդ պարտավորությունները հիմնավորող ֆինանսական փաստաթղթերի առկայությունը («ՓԱՍՏԻՆՖՈ» ՍՊԸ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ), ինչպես նաև այն, որ ներկայացված պայմանագրերից մի մասի ժամկետները լրացել են («ՓԱՍՏԻՆՖՈ» ՍՊԸ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊԸ), որոշ պայմանագրերի ժամկետների վերաբերյալ տվյալները բացակայում են, պայմանագրերի մի մասը կնքված և ստորագրված է միակողմանի՝ միայն հեռարձակողի կողմից («ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊԸ):

Տեխնիկական հնարավորությունների վերաբերյալ Ընկերությունները ներկայացրել են օգտագործվող և օգտագործվելիք տեխնիկական միջոցների ցանկը՝ քանակական տվյալներով և նկարագրություններով, տվյալներ տաղավարների և շարժական կայանների վերաբերյալ:

«ՓԱՍՏԻՆՖՈ» ՍՊ ընկերությունը ներկայացրել է նաև ձեռք բերվելիք սարքավորումների ցանկը՝ նշելով դրանց ընդհանուր արժեքը, որը կազմում է 190 մլն դրամ:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված տեխնիկայի մասին տվյալների ուսումնասիրությունից արձանագրենք, որ սերվերը և արբանյակի համար սարքավորումները նոր են՝ 2017-2020թթ., իսկ հիմնական աշխատանքային տեխնիկան հին է՝ 2001-2014թթ.:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությունը գործելու է հիմնականում «Հանրային հեռուստաընկերության առաջին ակիք» ծրագրի հեռարձակման համար օգտագործվող տեխնիկական միջոցներով, ինչպես նաև ներկայացվել են օգտագործվելիք տեխնիկայի արդիականության վերաբերյալ տվյալներ:

Աշխատակազմի վերաբերյալ Ընկերությունները ներկայացրել են որոշ աշխատողների ինքնակենսագրականները, տվյալներ կրթության և մասնագիտության վերաբերյալ, ինչպես

նան հետևյալ քանակական տվյալները. «ՓԱՍՏԻՆՖՈ» ՍՊ ընկերություն՝ 20 անձ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերություն՝ 119 անձ և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերություն՝ 170 անձ:

Ազգային, համամարդկային, հոգևոր, մշակութային մնայուն արժեքների ճանաչողությանն ու ամրապնդմանն ուղղված հաղորդումների վերաբերյալ Ընկերությունները ներկայացրել են հետևյալ հիմնական դրույթները.

«ՓԱՍՏԻՆՖՈ» ՍՊ ընկերությունը նշել է, որ նախատեսվում է հաղորդումների միջոցով հնարավորություն ստեղծել առնչվելու մշակութային արժեքներին, անդրադառնալ մշակութային խնդիրներին, մշակել հեղինակային ծրագրեր՝ մշակութային զարգացումը բարելավելու համար, մեղիադաշտում դիրքավորվել որպես Հայաստանի Հանրապետությունում բնակվող այլազգիների և տարածաշրջանային բազմազան համայնքների կյանքն ու մշակույթը լուսաբանելու համար հավասարաչափ հնարավորություն ընձեռող ալիք: Հաղորդացանցը համալրվելու է արտասահմանյան արտադրողներից գնված պատմական, մշակութային գեղարվեստական ֆիլմերով: Մշակույթի տարբեր ներկայացուցիչների աշխատավայրերում նկարահանվելու է «Արվեստանոց» հաղորդաշարի հաղորդումները: Ընկերության հաղորդացանցում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները կկազմեն շաբաթական եթերաժամի առնվազն 20 %-ը: Նշենք, որ Օրենքի 10-րդ հոդվածի 5-ր մասով արդեն իսկ ամրագրված է, որ հեռարձակողների ծրագրերում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները պետք է կազմեն շաբաթական եթերաժամի առնվազն 20 %-ը: Այսինքն, ընկերությունը ընդամենը պարտավորվում է ապահովել Օրենքով սահմանված նվազագույն պահանջը:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ ընկերությունը նշել է, որ ազգային, համամարդկային, հոգևոր, մշակութային մնայուն արժեքների ճանաչողությանն ու ամրապնդմանն ուղղված ջանքերը ներդրված են նախ և առաջ լրատվական թողարկումներում՝ հեղինակային ռեպորտաժների և իրադարձային լուսաբանումների միջոցով, արտադրվելու են նաև այնպիսի հաղորդումներ, որոնք հաշվի կառնեն հասարակության տարբեր շերտերի ազգային, կրոնական և քաղաքական առանձնահատկություններն ու նախասիրությունները, հաղորդակից կդարձնեն համաշխարհային մշակութային և համամարդկային արժեքներին, ազգային ավանդույթներին, հայոց պատմությանը, հասարակական կյանքին: Նախատեսվում է նոր նախագիծ երիտասարդ սերնդի համար՝ ուղղված այս արժեքների ապահովմանը, ներկայացվելու են հայոց պատմության կարևոր դրվագները և հայ գրականության

գոհարները: Նշված արժեքների ապահովմանն են ուղղված նաև «Հոգևոր անվտանգություն», «Կարճ կարևորի մասին» և այլ հաղորդումներ, հայոց պատմության հերոսական դրվագներին նվիրված վավերագրական ֆիլմեր:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության «Հանրային ժամանակ» ծրագրի ստեղծման հիմքում դրված է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման անհրաժեշտությունը: Նախատեսվում է նաև մշակութային թեմատիկ թողարկումներ, ինչպես նաև հանրային արխիվի հիման վրա տեղեկատվական-ճանաչողական բնույթի վավերագրության ներկայացում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը հանրային մուլտիպլեքսը դիտարկում է որպես ազգային մեդիահարթակ, որի սլոթերով հեռարձակվող տեսալսողական ծրագրերի բովանդակությունը պետք է արտացոլի հանրային պահանջմունքների և հետաքրքրությունների բազմազանությունը:

Տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, հանրային մուլտիպլեքսների գործունեության միջազգայնորեն ընդունված հայեցակարգերն ու չափորոշիչները նախատեսում են, որ սլոթերի օգտագործման լիցենզիա ստացած տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողները պետք է ունենան կառավարման և ֆինանսավորման թափանցիկ համակարգ, լինեն անկախ ու վստահելի, ապահովեն հաղորդումների բարձր որակ, ինչպես նաև առանցքային դերակատարում ունենան ազգային մշակույթի պահպանման և պաշտպանության, ազգային ինքնության ձևավորման գործում:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի համաձայն Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամները փակ վարկանիշային քվեարկության միջոցով կատարում են մրցույթում հաղթող մասնակցի ընտրությունը:

Վարկանիշային փակ քվեարկությունն ապահովելու նպատակով անցկացվել է վիճակահանություն, որի ժամանակ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամները պատահականության սկզբունքով վերցրել են հանձնաժողովի անդամների թվին համապատասխան վիճակահանության թվագրում պարունակող թերթիկները և փոխանցել

հանձնաժողովի քարտուղարին, որը վիճակահանության թերթիկներում նշված թվագրումով գնահատման թերթիկները տրամադրել է հանձնաժողովի անդամներին:

Վարկանիշային քվեարկությունից առաջ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամները հանդես չեն եկել հայտարարությամբ և միջնորդությամբ:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասի և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի 37-րդ կետի համաձայն մրցույթում հաղթող մասնակցի ընտրության ժամանակ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը հաշվի է առնում՝

1. սեփական արտադրության հաղորդումների գերակայությունը,
2. հայերեն հաղորդումների գերակայությունը,
3. բազմակարծությունը խթանելու կարողությունը,
4. հայտատուի տեխնիկական և ֆինանսական հնարավորությունները,
5. աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը,
6. ազգային, համամարդկային, հոգևոր, մշակութային մնայուն արժեքների ճանաչողությանն ու ամրապնդմանն ուղղված հաղորդումների գերակայությունը,
7. գործող լիցենզավորված տեսալսողական մեդիաձառայություն մատուցողի դեպքում՝ գործունեության իրականացման ընթացքում սլոթի օգտագործման լիցենզավորման հայտով ստանձնած պարտավորություններին համապատասխանությունը:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն վարկանիշային քվեարկության իրականացման ընթացակարգը սահմանվում է սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգով, որը 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն սահմանում է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը մրցույթում հաղթող մասնակցի ընտրության ժամանակ հաշվի է առնում վերոնշյալ 7 կետերը, սակայն մրցույթի բոլոր՝ գործող և նախկինում մեդիաձառայություն մատուցող չհանդիսացող մասնակիցների համար մրցակցային հավասար պայմաններ ապահովելու նպատակով Կարգի 32-րդ կետի համաձայն սահմանվել է, որ հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ Կարգի 37-րդ կետի 1-6-րդ ենթակետերում նշված յուրաքանչյուր չափանիշ գնահատում է գնահատման թերթիկում՝

ամբողջ թվերով՝ 20 միավորային սանդղակով: Գնահատման թերթիկի ձևը հաստատվել է Կարգի Ձև N 2-ով:

Գործող մեդիածառայություն մատուցող մասնակիցների դեպքում Կարգի 37-րդ կետի 7-րդ ենթակետը՝ «գործող լիցենզավորված տեսալսողական մեդիա ծառայություն մատուցողների դեպքում՝ գործունեության իրականացման ընթացքում լիցենզավորման հայտով ստանձնած պարտավորություններին համապատասխանությունը» հաշվի է առնվել նրանց տրված մյուս չափանիշների գնահատականներում:

Հաշվի առնելով վերոգրյալը, ուսումնասիրելով և համադրելով ներկայացված հայտերը և կից փաստաթղթերը, աշխատակազմի կողմից կազմված Ընկերությունների գործունեության վերաբերյալ տվյալները, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամները հայտերը գնահատել են հետևյալ միավորներով.

h/h	Գնահատման չափորոշիչը	«ՓԱՍՏԻՆՖՈ» ՍՊԸ							«ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱՍԼԻՔ» ՍՊԸ							«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՐԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ						
		Գնահատման թերթիկի համարը																				
		1	2	3	4	5	6	7	1	2	3	4	5	6	7	1	2	3	4	5	6	7
1	սեփական արտադրության հաղորդումների գերակայությունը	9	14	18	18	13	14	17	12	15	18	18	12	14	16	19	19	17	17	18	16	17
2	հայերեն հաղորդումների գերակայությունը	9	16	19	18	14	14	16	11	17	18	16	12	13	16	19	20	19	20	20	17	18
3	բազմակարծությունը խթանելու կարողությունը	8	14	17	18	11	12	15	10	12	17	18	9	11	14	16	14	5	8	15	11	14
4	տեխնիկական և ֆինանսական հնարավորությունները	11	12	17	19	12	15	17	16	17	17	18	14	17	18	18	18	10	14	16	15	18
5	աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը	10	12	16	15	11	16	15	15	16	18	18	16	17	18	17	16	12	16	16	17	17
6	ազգային, համա մարդկային, հոգևոր, մշակութային մնայուն արժեքների ճանաչողությանն ու ամրապնդմանն ուղղված հաղորդումների գերակայությունը	9	11	17	18	10	12	16	11	14	17	19	10	12	18	15	16	5	5	17	11	18
Ամփոփիչ միավորները		56	79	104	106	71	83	96	75	91	105	107	73	84	100	104	103	68	80	102	87	102
Վարկանիշային միավորը		595							635							646						

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-

րդ կետի համաձայն անցողիկ շեմ է համարվում տվյալ մրցույթում հնարավոր առավելագույն վարկանիշային միավորի մեկ երրորդը, այն է՝ 280 միավորը:

«ՓԱՍՏԻՆՖՈ» ՍՊ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ» ՍՊ և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությունները վարկանիշային քվեարկության արդյունքում հաղթահարել են անցողիկ շեմը, սակայն Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը 2021 թվականի փետրվարի 12-ի թիվ 26-Ա որոշմամբ 2021 թվականի փետրվարի 15-ին հայտարարել էր հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթ՝ 1 սլոթի քանակով: Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետի համաձայն՝ «Վարկանիշային քվեարկության արդյունքում հաղթող է ճանաչվում անցողիկ շեմը հաղթահարած և առավելագույն վարկանիշային միավոր ստացած մասնակիցը, իսկ մեկ մասնակցի դեպքում՝ անցողիկ շեմը հաղթահարած մասնակիցը»:

Դեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 46-րդ հոդվածի 6-րդ, 8-րդ, 10-րդ մասերի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով ու համադրելով վարկանիշային քվեարկության արդյունքները, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությանը ճանաչել հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մայրաքաղաքային սփռման մրցույթի հաղթող և տրամադրել Երևան քաղաքի տարածքում հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանը ծանուցելուց մեկ օր հետո:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ